ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 235/27-1 «07» 12 2022 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲՅՈՒՐԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԲԱԶԱՅՈՒՄ ԱՄԱՆՈՐՅԱ ՈՒՂԵԳՐԵՐԻ ԳՆԵՐԸ և ԱՄՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Երևանի պետական համալսարան>> հիմնադրամի /այսուհետ՝ ԵՊՀ/ կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում 31.12.22թ. - 06.01.23 թ. ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա/ մինչև 3 տարեկան երեխաների համար՝ անվճար,
   բ/ 3-12 տարեկան երեխաների համար՝ 60000 /վաթսուն հազար/ ՀՀ դրամ,
   գ/ 12 տարին լրացած անձանց համար՝ 100000 /հարյուր հազար/ ՀՀ դրամ:
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը /6 գիշեր/, երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:
2. ԵՊՀ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում 31.12.22թ. - 03.01.23 թ. ընկած ժամանակահատվածում ամանորյա ուղեգրերի արժեքը մեկ անձի համար սահմանել.
   ա/ մինչև 3 տարեկան երեխաների համար՝ անվճար,
   բ/ 3-12 տարեկան երեխաների համար՝ 30000 /երեսուն հազար/ ՀՀ դրամ,
   գ/ 12 տարին լրացած անձանց համար՝ 70000 /յոթանասուն հազար/ ՀՀ դրամ:
   Ուղեգրերի արժեքի մեջ ներառված են կեցությունը /3 գիշեր/, երեք անգամյա սնունդը և ամանորյա հյուրասիրությունը:
3. Սահմանել, որ
   ա/ Բյուրականի ուսումնաարտադրական բազայում ուղեգրերի ամրագրումը մեկնարկելու է 2022 թ. դեկտեմբերի 7-ին և շարունակվելու է մինչև 2022 թ.-ի դեկտեմբերի 22-ը:
   բ/ տեղերի ամրագրման առաջնահերթությունը տրվելու է ավելի վաղ վճարում կատարած ԵՊՀ աշխատակիցներին,
   գ/ ուղեգրերի արժեքը վճարվում է ԵՊՀ բանկային հաշվեհամարին՝ Արարատ բանկ հ/հ 1510001995480500 ,
   դ/ հայտերը ներկայացնել ԵՊՀ Կենտրոնական մասնաշենք, գիտքարտուղարություն, Սաթենիկ Բաբայանին /հեռ.՝ 11-05, 060710105, 094198010/:
   ե/ ուղեգրերի արժեքը վճարած անձանց համար բազայում սենյակների նախնական ամրագրումն իրականացնում է ԵՊՀ ռեկտորի աշխատակազմի ղեկավար Դ. Հովհաննիսյանը:
4. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատակիցներին:

ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան